

րատի որդին Դաւիթ եւ Լիսպարիտ, Օրբելեաններին նախահայրը, որ առաջին անգամ երեւում է պատմութեան մէջ, հայոց կողմն էին: Կոուրի մանրամասնութիւնները յայտնի չեն, բայց արդիւնքը կասկածից դուրս է որ յօգուտ հայոց էր:

Աչոտ յաղթանակեց եւ իր իշխանութեան տակ առաւ վրաց եւ աղուանից երկիրները եւ Կովկասեան լեռնականները:

Հաւանօրէն այս կուսակցական սպայքարի հետեւանքով էր, որ Գուռոսամ սպանեց իր որդու Նասրի ձեռքով Դաւիթ Կիւրապաղատին՝ Բագարատի որդուն եւ յաջորդին, ըստ Տարեգրքի, 881 թուին: Որ Գուռոսամը կուսակից էր Ափխազաց երեւում է նաեւ նրանից, որ իր դուստրը տուել էր Ափխազաց Ատրներսեհ թագաւորին կնութեան:

Տարեգրքը չփոթում է, Գուռոսամին Բագարատի հետ, երբ Աչոտ իշխանաց իշխանին անուանում է եղբայր Գուռոսամի կնոջ: (Մի տեղ սխալմամբ եղբայր Գուռոսամի, բաց թողնելով կնոջ բառը. «Քարթլիս ցխովբերա», էջ 191):

Բագարատն էր Աչոտի կնոջ ամուսինը եւ ոչ Գուռոսամը, ինչպէս գիտենք Շապուհ Բագարատունուց (առ Վարդան): Սա ասում է, որ Աչոտը Բագարատի մահից յետոյ «դնէ իշխան վրաց զքեռորդի իւր», այսինքն՝ Բագարատի որդուն՝ Դաւիթին: Սրա սպանութիւնից յետոյ յաջորդեց իր որդին՝ Ատրներսեհը, երբ հայերի օգնութեամբ քուէց նրա հակառակորդ եւ հօրը մահուան պատճառ՝ Նասրը:

Ատրներսեհը վայելեց եւ իշխանաց իշխանի որդու՝ Սմբատ թագաւորի հովանաւորութիւնն ու բարեկամութիւնը եւ նրա շնորհիւ արժանացաւ թագաւորական թագի:

Ահա ինչ է ասում ժամանակակից պատմագիրը.

«Մեծ Կուրապաղատն վրաց՝ Ատրներսեհ անվրդով եւ անշուշտ ուխտ փաղաղութեան եւ սիրոյ միաբանութեան ընդ արքայի Սմբատայ պահէր ի բոլոր մասունս առ ի բովանդակ մըտաց եւ ի զօրութենէ իւրմէ մեծաւ պատկառանօք իբրեւ հօր հնազանդ լեալ, կամ թէ եւս առաւել քան զայս, իբրեւ զծառայ ի տեսնել իւրմէ կամաւ կրեալ զսահման երկիւղի չափա-

ւոր մոլութեամբ եւ զաչս իւր մշտակարկաւոյ յարքայ հարեալ համակեալ մեծաւ զգուշութեամբ եւ նմա զանձն եւս հաւատացեալ: Ընդ որ յաւէտ իմն հաճեալ հաւանեալ արքայն Սմբատ բաղմագեղ նախախնամութեամբ յինքն զնա ամէր յանձանձէր: Ապա թագ կապեալ նմա մեծապատիւ ճոխութեամբ եւ զեղեցկայարմար դարդու, նաեւ զինու զարդարեալ ըստ օրինի թագաւորաց, կացուցանէ զնա թագաւոր Վրաց աշխարհին եւ երկրորդ իւրոյ տէրութեանն զնա հաստատէ» (Յովհ. կաթղ. էջ 101-102):

Ըստ վրաց Տարեգրքի՝ թագաւորութիւնը կատարուեց 899 թուին:

Այսպիսով Բագարատունեաց վրական ճիւղը եւս հասաւ արքայական թագի եւ տէր դարձաւ Վրաստանի: Ատրներսեհ շարունակեց զգալ եւ պահել ստեղծուած դրութիւնը հանդէպ հայոց թագաւորի՝ Սմբատի: Միեւնոյն ծառի երկու ոստերն էին եւ Սմբատ միայն աւազութեան կապակից մեծարանքն էր, որ վայելում էր: Երբ Եգեբաց թագաւորը Կոստանդինը, որ ամուսնացել էր Ատրներսեհի դստեր հետ, փորձեց գրաւել սրա հողերը Ալանց դըրան շուրջը, Սմբատ ընդդիմացաւ եւ Ատրներսեհի հետ միանալով սանձեց Կոստանդինին: Այն ազգերը «հաւանեալք եւ հնազանդեալք եւ նուաճեալք էին ընդ ձեռամբ արքային Սմբատայ», ասում է պատմագիրը, մինչ սպասելու էր, որ այս հողերը պատկանէին Ատրներսեհ թագաւորին:

Տոհմական ընդհանուր սեփականութեան գիտակցութիւնը տակաւին արթուն էր այդ ժամանակ: Արդարեւ, Սմբատ իր տէրութեան սահմանները հաշուում էր «մինչեւ ցԿարնոյ քաղաք եւ անդր եւս քան զԿղարջս քերեալ մինչեւ առ ափն ծովուն մեծի եւ մինչեւ ցսահմանս եզիրացուց եւ մինչեւ ցստորոտ մեծի լերինն Կովկասու — զԳուգարացիս, եւ զճանարս մինչեւ ցղունն Ալանաց առեալ եւս յինքն եւ զամբողջ դրան պահակի նոցա. ու անտի ի հարաւակողմն կոյս զԿուր դետով մինչեւ ի քաղաքն Տփղիս եւ զՈւտի դաւառ մինչեւ ի քաղաքն Հունարակերտ եւ մինչեւ ի Տուս եւ ի Շամքոր» (Յովհ. կաթղ. 89):

Սմբատը իր տէրութեան մէջ էր համա-